բակրոց իւրաքանչիւր այսպիսի ոքս գտցի՝ 'ի շտեմարանէն ամրոցէ գաւառի իւրոյ 25 կշիռ ցորեան վասն կերակրոյ իւրոյ և 25 կշիռ ցորեան վասն սերմանելոյ իւրոյ առանց գնոյ և առանց հատուցանելոյ փոխարէն, բայց 'ի շնորհաց տանէն հայոց.

ԳԼՈՒԽ ՃԼԶ.

Ամենայն իշխան 'ի վերայ աշխարհին հայոց պարտ է պատրաստել մէջ ամենայն ամրոցաց 'ի ներքոյ իշխանութեան իւրոյ ծախիւք տանն հայոց չափաւոր վառօդս, հացս, փայտս, վառելիքս, աղս և տիկ բառնալոյ ջրոյ, և կաշի վասն տրեխի, և կացին վասն հատանելոյ փայտի և բահս, և ամենայն չորս եղանակս տարոյն չորս անգամ առաքեսցէ վերատեսուչս այրս հաւատարիմս զի ականատեսութեամբ տեսցէ և պակասութիւնն և լրումն բանին երդմամբ բացատրեսցի 'ի ատենի յիշխանին զի պակասութիւնն լցուսցէ։

ԳԼՈՒԽ ՃԼԷ.

Որում տեղի և որում ժամանակի յերեսս երկրին հայոց եթէ 'ի ժամանակս խաղաղութեան, և եթէ պատերազմի ով ոք թշնամի որ